Դասղեկի տարեկան պլան

Հաստատում եմ

Տնօրեն՝ _____

<< ____ >> _____ 2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի N5 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

2-րդ դասարան

Դասղեկ՝ Ստեփանյան Արմինե

2023-2024 ուսումնական տարի

ԿՐԹԱ – ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը) Երկրորդ դասարանում սովորում է 5 աշակերտ՝ 1 աղջիկ և 4 տղա: Դասարանում կան ընդունակ և ուշիմ աշակերտներ: Իմ նպատակն է դաստիարակչական աշխատանքների միջոցով բարձրացնել աշակերտների կարգապահությունը և համերաշխ, հանդուրժող հոգատար և առողջ դասարան ստեղծելը: Նաև ուշադրություն դարձնել աշակերտների տարիքային առանձնահատկությանը:
2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում: Հաշվի առնելով աշակերտների տարիքային առանձնահատկությունները, ամբողջ ուսումնական տարվա ընթացքում դաստիարակչական աշխատանքները կենտրոնացնել առողջ և համերաշխ կոլեկտիվի ստեղծմանը. ընկերասեր, հայրենասեր, լիարժեք դաստիարակություն ստացած, ինքնուրույն գործելակերպ ունեցող սերնդի ստեղծումը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Աշակերտների մոտ ձևավորել կարգա-պահություն և մաքրություն:

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն: Պատմել կամ ընթերցել <<Մանկական Աստվածաշունչը>>: Ուսուցանել տերունական աղոթքը: Անցկացնել հոգևոր գիտելիքների հաղորդման ժամ:

3.2 Գեղագիտական դաստիարակություն: Հնարավորինս մեկնաբանել ժողովրդական ժամանակակից երաժշտության մասին: Երեխաների հոգում արթնացնել գեղեցիկը, լուսավորել նրանց միտքը: Անցկացնել զրույցներ << Գեղեցիկը կյանքում>> թեմայով:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն: Տալ ծանոթություն մեր հայրենիքի՝ Հայաստանի անցյալի պատմությանը: Երազել, թե ինչպիսին կցանկանային տեսնել ապագա ՀՀ-ը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն: Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն: Բացատրել և պահանջել, որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը:

3.5 Աշխատանքային դաստիարակություն: Աշակերտներին մասնակից դարձնել դասարանի կահավորմանը, վերանորոգել տալ դասագիրքը: Հոգ տանել դասարանի և դպրոցի բակի մաքուր պահելու մասին:

3.6 Բնապահպանական դաստիարակություն: Բնությունը մարդու կենսագործունեության բնական միջավայրն է: Առաջացնել սեր բնության նկատմամբ: Հաճախակի լինել բնության գրկում, դիտել տեղի ունեցող փոփոխությունները:

4.ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ : Պետք է սերտ կապի մեջ պահել դպրոց ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն: Հրավիրել ծնողական ժողովներ: Ծնողը պիտի ավելի հետևողական և նպատակային աշխատանք տանի իր երեխայի հետ:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ժամկետը
I	Մեր դպրոցը:	Սեպտեմբեր 5
II	Կազմակերպչական հարցեր կապված ուսումնական տարվա սկզբի հետ (ուսուցչի և ընկերների հետ շփումը):	Սեպտեմբեր 12
III	Զրույց՝ << Անկախության օր>>:	Սեպտեմբեր 19
IV	Ծանոթացնել դպրոցում, փողոցում, հասարակական միջավայրում իրենց պահելու ձևերին:	Սեպտեմբեր 26
V	Ուսուցչի օր. բացիկների պատրաստում:	Հոկտեմբեր 3
VI	Զրույց՝ <<Ճշմարտությունը ամեն ինչից թանկ է>> թեմայով:	Հոկտեմբեր 10
VII	Զրույց՝ <<Իմ ընտանիքը>> թեմայով /յուրաքանչյուր աշակերտ կպատմի իր ընտանիքի մասին/	Հոկտեմբեր 17
VIII	Զրույց՝ <<Ընկերոջ նկատմամբ հոգատար վերաբերմունք>> և <<Ինչպես պետք է վերաբերվել դիմացինին>> թեմաներով:	Հոկտեմբեր 31
IX	Զրույց՝ <<Մարդիկ մեր շուրջը>> թեմայով:	Նոյեմբեր 7
X	Զրույց՝ <<Օրվա ռեժիմը և մեր առողջությունը>> թեմայով:	Նոյեմբեր 14
XI	Զրույց՝ <<Ինչ է բարությունը>>, <<Բարի գործեր>> թեմաներով:	Նոյեմբեր 21
XII	Բանաստեղծության ժամ <<Իմ սիրած բանաստեղծությունը>> թեմայով:	Նոյեմբեր 28

XIII	Կազմակերպել զրույց բնական աղետների վերաբերյալ:Զրույց՝ <<Երկրաշարժի>> մասին:	Դեկտեմբեր 5
XIV	Կազմակերպել զրույց <<Ձմեռ Պապը և Ձյունանուշը>> թեմայով:	Դեկտեմբեր 12
XV	Հրավիրել դասարանական ժողով և ամփոփել 1-ին կիսամյակի արդյունքները:	Դեկտեմբեր 19
XVI	Կազմակերպչական հարցեր կապված ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի հետ:	Հունվար 23
XVII	***Հետազոտական աշխա-տանք «Ես և իմ անունը»*** «Ես և իմ անունը» հետազոտական աշխատանքի քայլաշարի մշակում	Հունվար 30
XVIII	Ո՞վ և ինչո՞ւ է ընտրել իմ անունը: Իմ անվան ծագումնաբանությունը և նշանակությունը:	Փետրվար 6
XIX	Իմ անվանակից հայտնիները: Ամենահայտնի ժամանակակից անունները:	Փետրվար 13
XX	Պատրաստվում ենք <<Թումանյանական շաբաթի>>	Փետրվար 20
XXI	Կազմակերպել զրույց <<Գարուն>> թեմայով:	Փետրվար 27
XXII	Զրույց՝ <<Մայրության և գեղեցկության օրը>> թեմայով:	Մարտ 5
XXIII	Սովորեցնել խոսել մաքուր հայերենով, սկսել կարդալ արտահայտիչ:	Մարտի 12
XXIV	Զրույց՝ <<Ինչ նվիրեմ մայրիկիս>> թեմայով:	Մարտի 19
XXV	Զրույց՝ <<Կա'նք, պիտի' լինենք ու դեռ շատանանք>>, << Ինչ ես հասկանում հայրենիք և հայրենասիրություն ասելով>>:	Ապրիլ 2
XXVI	Աշակերտների գիտակցությանը հասցնել գեղեցիկի և տգեղի տարբերությունը: Սեր առաջացնել նկարչության և երաժշտության նկատմամբ:	Ապրիլ 9
XXVII	Զրույց՝ <<Սիրեցեք գիրքը>>: Ընթերցել հայ մանկագիրների ստեղծագործություններից:	Ապրիլ 16
XXVIII	Կազմակերպել մրցույթ՝ <<Լավ պահպանված գրքեր>> վերնագրով:	Ապրիլ 23
XXIX	Կազմակերպել մրցույթ անծանոթ տեքստի ընթերցանություն և վայելչագրություն թեմաներով:	Ապրիլ 30
XXX	Հրավիրել դասարանական ժողով և ամփոփել 2-րդ կիսամյակի և տարեկան արդյունքները:	Մայիս 7
XXXI	Զրույց՝ Կոնֆլիկտների հաղթահարում թեմայով:	Մայիս 14
XXXII	Կազմակերպել տարեվերջյան էքսկուրսիա	Մայիս 21

Digitally signed by
NAVASARDYAN
KHAZHAKN
1905610114
Date: 2023.09.26
13:08:12 AMT